ՆՎԻՐՎՈՒՄ Է

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 50 ԱՄՅԱԿԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ՏԱՎՈՒՇ
ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ
ԻՋԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
Երևան 2009

ՀՏԴ 06:008 (479.25)
ԳՄԴ 71(2Հ)
Տ 249

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիրներ՝ Ա. Քալանթարյան, Հ. Սարգսյան

ՏԱՎՈՒՇ. ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ.
Տ 249 Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր,
խմբագիրներ՝ *Ա. Քալանթարյան, Հ. Սարգսյան,*
Եր.: Գիտություն, 2009. - 290 էջ:

ԳՄԴ 71(2Հ)

ISBN 978-5-8080-0782-6

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2009
© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2009

Բորիս Գասպարյան, Արթուր Պետրոսյան
ՀԱԻ,
Ռոն Փինհասի
Իռլանդիա,
Դմիտրի Առաքելյան
ԵԻ,
Իվան Գաբրիելյան
ԲԻ,
Սամվել Նահապետյան
ԵՊՀ

ՔԱՐԵԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՂՍՏԵՎԻ ՀՈՎՏՈՒՄ 2005-2008թթ.

Սույն աշխատանքներն իրականացվել են հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Լոնդոնի Ռոհեմփթոնի համալսարանի (Մեծ Բրիտանիա), Քորքի համալսարանի (Իռլանդիա) և Ամերիկայի «Գֆոելլեր» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից աջակցվող ծրագրի շրջանակներում (արշավախմբի համաղեկավարներ Բ. Գասպարյան և Ռ. Փինհասի):

Հետազոտական-հետախուզական աշխատանքներն իրականացվել են Աղստև գետի ստորին և միջին հոսանքներում, նրա ձախ ափի և ձախակողմյան վտակների (Բլդան, Հաղարծին, Սևքարաջուր, Թեղուտ, Նորաշեն, Դեղինաղբյուր, Սառնաջուր, Մթնաձոր գետակների) երկայնքով տարածվող և Հալաբի լեռնաշղթայի հարավային ու Իջևանի լեռնաշղթայի հարավային և արևելյան լանջերն ընդգրկող՝ Մարգահովիտ, Ֆիոլետովո, Թեղուտ, Հաղարծին, Հովք, Գետահովիտ, Ենոքավան, Լուսաձոր գյուղերի, Դիլիջան ու Իջևան քաղաքների վարչական տարածքներում: Գեոմորֆոլոգիական առումով նշված շրջանն ընդգրկում է Մարգահովտի և Դիլիջանի փոքրիկ գոգավորությունները և Աղստև գետի նեղ հովտը:[1] Իրականացված հետազոտությունների արդյունքում այստեղից հայտնա-

---

[1] ***Думитрашко Н.В.***, Схематическая геоморфологическая карта Сомхетских гор, Базумского, Халабского, Памбакского хребтов и Памбакской долины; ***Думитрашко Н.В.***, Схематическая геоморфологическая карта Арегунийского, Памбакского, Иджеванского и Мургузского хребтов; ***Думитрашко Н.В.***, ***Нефедьева Е.А.***, Подобласть внешних хребтов Малого Кавказа. Общая характеристика; в кн. "Геоморфология", из серии "Геология Армянской ССР", т. 1, Е., 1962, сс. 76-77, 141-146, 150-154.

բերվել են քարի դարի տարբեր ժամանակահատվածներին (միջին պալեոլիթից մինչև էնեոլիթ) վերաբերող առանձին գտածոներ ու ոչ մեծ հավաքածուներ, ինչպես նաև փաստագրել և հետազոտվել են բացօթյա հնավայրեր (5), կայաններ (2), ժայռածածկեր (3) և քարայր-կացարաններ (4): Քարեդարյան հուշարձանների համալիրներ են փաստագրվել Հովք և Ենոքավան գյուղերի շրջակայքում, որոնք ներկայացված են մի քանի բացօթյա հնավայրերի, կայանների և քարայր-կացարանների զուգորդմամբ առկա հուշարձանախմբերով, որոնք հանդիսանում են հնագույն մշակույթի զարգացման յուրօրինակ օջախներ: Հետախուզական և սիստեմատիկ պեղման ու նյութերի հավաքման աշխատանքներ են իրականացվել Թեղուտ-2, Հաղարծին-1, Հովք-1, Ենոքավան-1-3 քարայր-կացարաններում, Հովք-1-3 ժայռածածկերում, Հովք-1-2 կայաններում և Մարգահովիտ-1, Հովք-1-3 (աղյուսակներ 8-10), Ենոքավան-1 բացօթյա հնավայրերում:

Ուսումնասիրվել են նաև նշված տարածքներում առկա հնէաբանական (հնաբուսաբանական և հնակենդանաբանական) տեղավայրերը (Դիլիջան-1-4, Թեղուտ-1-2, Հովք-1-4, Ենոքավան-1), ինչպես նաև չորրորդական շրջանի զարգացման օրինաչափությունները բացահայտող երկրաբանական կտրվածքներն ու գոյացությունները (Մարգահովիտ, Ֆիոլետովո, Գետահովիտ գյուղերի շրջակայքում տարածվող ավազային և Լուսածոր գյուղի մոտ առկա դիատոմիտային ծագում ունեցող լճային նստվածքները, Դիլիջան քաղաքի, Թեղուտ և Հաղարծին գյուղերի շրջապատում առկա տրավերտինային գոյացությունները) և, վերջապես, աշխատանքային գործիքներ պատրաստելու համար պիտանի հումքի աղբյուրները (Հովք՝ քարացած փայտ և կվարցացված կրաքար, Ենոքավան՝ կայծքար, հասպիս և ագաթ):

Աղստևի հովտում կատարված հետազոտական աշխատանքները ցույց են տալիս, որ նշված տարածքը հարուստ է հնաբուսաբանական և հնակենդանաբանական տեղավայրերով, որոնք առատ և բավականին լավ պահպանված նյութեր են տրամադրում հյուսիսարևելյան Հայաստանի երկրաբանական անցյալի՝ ռելիեֆի, ջրագրական ցանցի զարգացման օրինաչափությունների, հնագույն բուսականության և կենդանական աշխարհի, պալեոկլիմայի մասին որոշակի պատկերացում կազմելու համար: Չնայած դրանց ստվար մեծամասնությունը ժամանակագրական առումով բավական հեռու է հնագիտական դարաշրջաններից (վերաբերում են յուրայի, կավճի, պարբերաշրջաններին և պալեոգենի տարբեր փուլերին), այսուհանդերձ նրանց ուսումնասիրությունը և հատկապես պահպանությունը չափազանց կարևոր են, քանի որ այս տեղավարերի մի

մասն այսօր արդեն ընկած է Դիլիջան քաղաքի շրջագծում:[2] Նշված տեղավայրերի շարքում առանձնակի նշանակություն ունեն Դիլիջան-1-2, 4 բրածո բույսերի և ձկների (Աղյուսակներ 2-4), Թեղուտ-2 բրածո օրգանիզմների (աղյուսակ 6) և Հովք-1-3 բրածո օրգանիզմների և բույսերի (աղյուսակ 1) տեղավայրերը:[3]

Չորրորդական ժամանակաշրջանին պատկանող տեղավայրերից էական նշանակություն ունի Թեղուտ-1-ը, որը գտնվում է Հաղարծին գետակի ձախ ափին՝ համանուն վանքից 1կմ հյուսիս, հյուսիս-արևելք: Բրածո տերևների և խխունջների խեցիների դրոշմներն այստեղ հայտնաբերվել են մոտ 20մ հզորությամբ տրավերտինային նստվածքներում (այստեղից արդյունահանված տրավերտինը ժամանակին օգտագործվել է Հաղարծնի վանքի շինարարության համար, իսկ միջնադարում փորված անձավների պատերը ծեփվել են կրաշաղախով): Տեղավայրի տրավերտինային նստվածքների տարբեր մակարդակներից ձեռք բերված բրածո բույսերի 100-ից ավելի դրոշմները պահպանված են հատվածաբար և դժվար են ենթարկվում որոշման: Այսուհանդերձ, դրանց շարքում հաջողվել է որոշել հետևյալ ծառատեսակները՝ թեղի, հաճարենի, կաղնի, կեչի, բոխի, ուռենի, բարդի, թխկի, հացենի, մագնոլիա (աղյուսակ 5): Տրավերտինների տեսանելի կտրվածքից վերցված նմուշների U/TH-ային եղանակով Կիելի լաբորատորիայում (Գերմանիա) կատարված վերլուծությունների արդյունքները (IFM-GEOMAR HA-1 226,1 ° 20,6 ka - գոյացության ստորին

---

[2] Местонахождения ископаемых растений, нуждающиеся в охране, Ответсвенный редактор ***А.Л. Тахтаджян***, Труды Ботанического Института им. В.Л. Комарова, Выпуск 12, Санкт Петербург, 1994, сс. 37-38, 68; ***Григорян С.М.***, ***Габриэлян И.Г.***, Неостратотип Дилижанской свиты, Известия Национальной Академии Наук Республики Армения, Науки о Земле, 1994, N1-2 (67), стр. 3-6.

[3] ***Габриелян А.А.***, ***Тахтаджян А.Л.*** и ***Саркисян О.А.***, О возрасте угленосно-сланценосной свиты окрестностей гор. Дилижана, Доклады Академии Наук Армяской ССР, Науки о земле, 1958, N3 (26), с. 181-186; ***Мчедлишвили П.А.***, О возрасте угленосных отложений Дилижанского района Армении, Доклады Академии Наук СССР, 1959, N2 (124), с. 390-391; ***Колаковский А.А.***, ***Арутюнян М.Е.***, Castanopsis Furcinevis, как характерный элемент олигоценовых флор Кавказа, Известия Академии Наук Армяской ССР, Науки о земле, 1969, N2 (22), с. 10-12; ***Саркисян О.А.***, ***Арутюнян М.Е.***, К вопросу о стратиграфическом расчленении Дилижанской свиты, Ученые записки Ереванского Государственного университета, Естественные науки, 1970, N3 (115), с. 122-130; ***Арутюнян М.Е.***, Новый представитель рода Ocotea в олигоцене Армении, Доклады Академии Наук Армяской ССР, Науки о Земле, 1972, N3 (54), с. 172-174; Ископаемые цветковые растения ССР, под редакцией академика ***А.Л. Тахтаджяна***, т.1, Л., 1974, стр. 28, 29, 159, карта 2 на стр. 173; ***Абрамян М.С.*** и др., Атлас ископаемой фауны Армянской ССР, Е., 1974, сс. 13-22, 171-172, 174-175, 177, 179-181, 186-187, 189, 241, 216-217, 227-228, 241, 246, 252, 254-255, 261-263, 275-276, табл. 78, 86-87, 90-91, 106, 111-112, 121-123, 128-130, 132, 134, 139, 146; ***Арутюнян М.Е.***, Олигоценовая флора Дилижана (Армянская ССР), ее стратиграфическое и палеогеографическое значение, Авторф. дис. канд. геол.-минер. наук, Е. 1975, с. 4-24.

հատվածի տրավերտիններ, HA-2 178,1° 18,7 ka - գոյացության վերին հատվածի տրավերտիններ, HA-3 337° 73,6 ka - գոյացության հիմքում գտնվող քայքայված տրավերտիններ, որոնք չեն պարունակում բրածո մնացորդներ) թույլ են տալիս հասակագրել դրանք վերին պլեյստոցենի միջին փուլերով: Նշված ծառատեսակներն այսօր տարածված են Աղստևի հովտում և բնորոշ են խոնավ կլիմայական պայմաններին, ինչից կարելի է եզրակացնել, որ վերին պլեյստոցենի միջսառցապատման փուլերում տեղի է ունեցել կլիմայի տաքացում և խոնավացում, որն էլ բերել է այս տրավերտինային գոյացությունների առաջացմանը: Թեղուտ-1 տեղավայրից ստացված տվյալները կորելացվում և լրացվում են Հովք-1 քարայրի առաջին դահլիճի երկրաբանական շերտերի 6-րդ հորիզոնում բացված կարբոնատային գոյացությունից (ստալագմիտ, 6a միավոր) վերցված փորձանմուշի կտրվածքի տարբեր մակարդակներից Բրիստոլի համալսարանի լաբորատորիայում (Մեծ Բրիտանիա) կատարված U/TH-ային եղանակով վերլուծության արդյունքների հետ (BIG-UTH-A243 94,2° 4,9 ka; BIG-UTH-A244 235,3° 6,8 ka; BIG-UTH-A245 192,3° 3,0 ka; BIG-UTH-A246 124,6° 1,1 ka; BIG-UTH-A247 123,1° 1,0 ka; BIG-UTH-A248 120,1° 1,0 ka): Այս տվյալները վկայում են, որ Աղստևի հովտում պլեյստոցենային կլիմայի տաքացումը և խոնավացումը բերել է նաև կարստային գործընթացների շոշափելի ակտիվացման, որը շարունակվել է մինչև վերին պլեյստոցենի եզրափակիչ փուլերը, երբ արդեն տրավերտինների ձևավորման ընթացքը դադարել էր, այսինքն կլիմայի տաքացումը բավարար չէր դրանց առաջացման համար:[4]

Աղստևի հովտում չորրորդական ժամանակաշրջանում գոյություն ունեցած լճային ավազանների մասին են վկայում նրա վերին և միջին հոսանքներում տարածվող լճային նստվածքները: Դրանք ներկայացված են տարբեր ծագման (լճաարգելափակոցային և լճագետային) կավավազային, ավազակավային, ալևրիտային նստվածքների, ավազների առանձին ոսպնյակների,[5] ինչպես նաև դիատոմիտների տեսքով[6] և վկայում են,

---

[4] ***Pinhasi R.***, ***Gasparian B.***, ***Wilkinson K.***, ***Bailey R.***, ***Bar-Oz G.***, ***Bruch A.***, ***Chataigner C.***, ***Hoffmann D.***, ***Hovsepyan R.***, ***Nahapetyan S.***, ***Pike A.W.G.***, ***Schreve D.***, ***Stephens M.***, Hovk-1 and the Middle and Upper Paleolithic in Armenia: a preliminary framework / Journal of Human Evolution, 55 (2008), pp. 803-816.

[5] ***Думитрашко Н.В.***, Схематическая геоморфологическая карта Сомхетских гор, с. 76-77; ***Милановский Е.Е.***, Памбакская долина, в кн. "Геоморфология", из серии "Геология Армянской ССР", т. 1, Е., 1962, с. 113; ***Бойнагрян В.Р.***, ***Бойнагрян Т.Г.***, ***Гаспарян А.А.***, ***Мхитарян М.А.***, Механический состав склоновых рыхлых отложений среднего течения р. Агстев как показатель к их предрасположенности к оползанию, Известия Академии Наук Армяской ССР, Науки о Земле, 1984, N6 (37), с. 51-54; ***Аракелян Д.Г.***, ***Ядоян Р.Б.***, ***Степанян В.Э.***, К вопросу об экзогенных процессах на территории Та-

որ Մարգահովտի գոգավորությունում և Աղստև գետի հովտի միջին հոսանքի որոշ տեղամասերում առկա են եղել ոչ մեծ չափեր և խորություն ունեցող լճեր: Լճերի և լճային գոգավորությունների գոյության փաստը ուսումնասիրվող տարածքում ինքնին ուշագրավ երևույթ է քարի դարի հնագիտության համար, քանի որ Հայաստանի տարածքում ապրող պալեոմարդը նախընտրել է իր կենցաղը կազմակերպել նման էկոխորշերի շրջակայքում (Արարատյան, Շիրակի, Լոռու, Ապարանի գոգավորությունների օրինակով): Սակայն լճային այս նստվածքները դեռևս պատշաճ մակարդակով չեն ուսումնասիրված և հասակագրված (ենթադրաբար միջին-վերին պլեյստոցեն), իսկ դրանց հարող տարածքները կարիք ունեն հնագիտական մանրամասն ուսումնասիրության:

Անդրադառնալով Աղստևի հովտում առկա աշխատանքային գործիքներ պատրաստելու համար անհրաժեշտ հումքի աղբյուրների ուսումնասիրությանը, պետք է նշել, որ այստեղ կան միայն նստվածքային և կվարցացված ապարներ, որոնք պիտանի են նման գործունեություն իրականացնելու համար: Հյուսիսարևելյան Հայաստանի տարածքում ընդհանրապես գերակշռում են կայծքարի և նրա տարատեսակների և կրաքարի վրա հիմնված քարե գործիքների արտադրահամալիրներ: Վանակատից պատրաստված իրերը և արտադրահամալիրները սակավ են, իսկ հումքը բերված է առնվազն 40-60կմ հեռավորություն ունեցող շրջաններից (Ծաղկունյաց, Գուբանասարի, Հատիսի, Գեղամա լեռների աղբյուրներից): Մեր կողմից ուսումնասիրվող տարածքում հաջողվել է փաստագրել կայծքարի և նրա խմբի ապարների (հասպիսի, ագաթի), կվարցացված կրաքարի, քարացած (բրածո) փայտի (Աղյուսակ 7) մի շարք ելքեր և երևակումներ, որոնցից ամենակարևորները գտնվում են Հովք և Ենոքավան գյուղերի շրջակայքում: Վերջիններս լավ ծանոթ են եղել տեղաբնիկներին, քանի որ հուշարձաններում առկա են այստեղից ձեռք բերված հումքատեսակներից պատրաստված իրեր, իսկ դրանցից երկուսի անմիջական հարևանությամբ բացահայտվել և ուսումնասիրվել են Հովք-3 և Ենոքավան-1 քարեդարյան բացօթյա հնավայրերը:

Աղստևի հովտում փաստագրված քարեդարյան հուշարձանները տեղակայված են նախալեռնային և բարձր լեռնային շրջաններում և զբաղեցնում են ծովի մակերևույթից 915-2125մ բարձրություններ ունեցող գոտիները: Նշված հուշարձանների ուսումնասիրության գործընթացը

вушской области Республики Армения, Вестник Международной Академии Наук Экологии и Безопасности Жизнедеятельности (МАНЭБ), т. 10, N5, вып. 2, С.Пб, 2005, с. 15-20.

[4] ***Саркисян П.М.***, Диатомит, в кн. "Неметаллические полезные ископаемые", из серии "Геология Армянской ССР", т. 7, Е., 1966, с. 456.

ցույց է տալիս, որ դրանք պատկանում են վերին պլեյստոցենի միջին (միջին պալեոլիթի վաղագույն փուլ), ինչպես նաև եզրափակիչ (միջին պալեոլիթի եզրափակիչ փուլ, վերին պալեոլիթ) և հոլոցենի սկզբնափուլերին (մեզոլիթ-նեոլիթ) և միջին փուլին (նեոլիթ-էնեոլիթ) բնորոշ մշակույթներ կրող հասարակական խմբերին: Իրենց գերակշիռ մեծամասնությամբ դրանք հումքի աղբյուրների հարևանությամբ առկա կայան-արհեստանոցներ և որսորդական բնույթի ճամբարներ են, որոնք խոսում են Աղստևի հովտի պարբերական յուրացման մասին՝ սկսած մեզանից առնվազն 105 հազար տարի առաջ: Փաստորեն, ընդհանրացնելով այստեղ առկա էկոլոգիական խորշերի հին հասարակությունների կողմից յուրացման օրինաչափությունները, կարող ենք եզրակացնել, որ տարածքի նկատմամբ «հետաքրքրությունը» նախ և առաջ պայմանավորված է եղել տեղում հումքի առաջնակարգ աղբյուրների՝ կվարցացված կրաքարի, քարացած փայտի, կայծքարի առկայությամբ: Դրանում իրենց որոշիչ դերն են խաղացել նաև տեղի չափազանց հարուստ և բազմազան բնաաշխարհագրական պայմանները, կապված հարուստ ջրային պաշարների, անտառային ծածկույթի ու որսի կենդանիների (հատկապես խոշոր կաթնասունների) առկայության հետ: Տարածքը չի կորցրել իր կարևորությունը նաև հետագայում՝ բրոնզի դարից մինչև միջնադարն ընկած ժամանակաշրջանը ներառյալ, երբ այն օգտագործվել է թե որսորդական, թե՝ անասնապահական (այպյան մարգագետինների առկայությունը 1900մ և ավելի բարձրություններում) և թե պաշտպանական նպատակներով (այստեղ փաստագրվել է այս ժամանակաշրջանին պատկանող հուշարձանների զգալի քանակություն):

Այսպիսով, 2005-2008թթ. Աղստևի հովտում կատարված հնագիտական աշխատանքների արդյունքում բացահայտվել են հյուսիսարևելյան Հայաստանի համար երկու նորահայտ և կարևորագույն քարեդարյան հուշարձանների օջախներ (Հովքի և Ենոքավանի), որոնց ապագա ուսումնասիրությունը կնպաստի ոչ միայն նշված տարածքի, այլև Հայկական լեռնաշխարհի և Կովկասի բնակեցման վաղագույն փուլերի հետ կապված գիտական խնդիրների լուսաբանմանը: Ավելին, այս հուշարձանախմբերի մանրամասն ուսումնասիրությունը հնարավորություն կտա բացահայտել նորահայտ երկու օջախների միջև այսօր արդեն նկատելի առնչությունները, ինչպես նաև հասկանալու հարևան հանրապետությունների սահմանակից տարածքներում արդեն վաղուց ուսումնասիրված համանման օջախների հետ նրանց ունեցած կապերն ու փոխհարաբերությունները: Այդ երևույթները պայմանավորված են եղել Աղստևի հովտում կլիմայական պայմանների և լանդշաֆտների փոփոխության արդյունքում տարածքի պալեոբնակչության տեղաշարժերի և կենցաղի կազմակերպման նոր եղանակների յուրացման հետ:



Regnum - PLANTAE - ԲՈՒՅՍԵՐ
Division - PTERIDOPHYTA - ՊՏԵՐԱՆՄԱՆՆԵՐ
1-6 - *Pteridophyta sp.* 1-4; բրածո պտերներ (գ. Հովք)

Տավուշի մարզ: Գյուղ Հովք:
Հովք-1 բրածո բույսերի տեղավայր



Regnum - PLANTAE - ԲՈՒՅՍԵՐ

Division - PINOPHYTA (GYMNOSPERMAE) - ՍՈՃԱՆՄԱՆՆԵՐ (ՄԵՐԿԱՍԵՐՄԵՐ)

1 - *Thuja sp.* - Թույա անորոշ

2, 3 - *Pinaceae sp.* 1-2 - Սոճազգի անորոշ 1-2

4 - *Pinophyta sp.* - Մերկասերմավոր անորոշ

Division - MAGNOLIOPHYTA (ANGIOSPERMAE) - ՄԱԳՆՈԼԻԱՆՄԱՆՆԵՐ (ԾԱԾԿԱՍԵՐՄԵՐ)

5 - *Cinnamomum lanceolatum* (Ung.) Heer - Դարչինածառ նեղատերև

6 - *Comptonia acutiloba* Brongn. - Կոմպտոնիա նեղաբլթակ

7 - *Castanopsis furcinervis* . (Rossm.) Kraus. et Weyl. - Կաստանոպսիս բազմաջիղ

Տավուշի մարզ: Քաղաք Դիլիջան:
Դիլիջան-2 բրածո բույսերի տեղավայր



1



2

5a

5

5b

3

4

6



7

8

Class - PISCES - ՁԿՆԵՐ
1 - *Osteichthyes sp.* - Ոսկրային ձուկ անորոշ
Class - PINOPSIDA - ՍՈՃԱՆՄԱՆՆԵՐ
Family - Pinaceae - Սոճազգիներ
2 - *Pinus sp.* - Սոճի անորոշ
Family - Taxodiaceae - Տաքսոդիազգիներ
3, 4 - *Taxodium dubium* (Sternb.) Heer - Տաքսոդիում դուբիում
Class - MAGNOLIOPSIDA - ՄԱԳՆՈԼԻԱՆՄԱՆՆԵՐ
Family - Betulaceae - Կեչազգիներ
5 - *Alnus sp.* - Լաստենի անորոշ
Family - Aceraceae - Թխկազգիներ
6 - *Acer paleosaccharinum* Stur. - Թխկի պալեոշաքարային
Family - Rhamnaceae - Դժնիկազգիներ
7 - *Zizyphus zizyphoides* (Unger) Heer - Ունաբի ունաբանման
Family - Myricaceae - Մյուրիկազգիներ
8 - *Comptonia diforme* (Sternb.) Berry - Կոմպտոնիա երկձև

0
1
2 cm

Տավուշի մարզ: Քաղաք Դիլիջան:
Դիլիջան-4 բրածո բույսերի և կենդանիների տեղավայր



Regnum - ANIMALIA - ԿԵՆԴԱՆԻՆԵՐ
Class - PISCES - ՁԿՆԵՐ
1 - *Palaeoleuciscus macrocephalus*.Pip. et I.Gabr. - Պալեոլեուցիսկուս մեծագլուխ
2-9 - *Osteichthyes sp.* 1-8 - Ոսկրային ձկներ անորոշ 1-8

Տավուշի մարզ: Քաղաք Դիլիջան:
Դիլիջան-1 բրածո ձկների տեղավայր

ԱՂՅՈՒՍԱԿ 5



1



2

4



3



5

Betulaceae - Կեչազգիներ - Березовые
1 - *Carpinus sp.* - Բոխի անորոշ - Граб неопред.
Fagaceae - Հաճարազգիներ - Буковые
2 - *Quercus sp.* - Կաղնի անորոշ - Дуб неопред.
3 - *Fagus sp.* - Հաճարենի անորոշ - Бук неопред.
Magnoliopsida - Մագնոլիայիններ - Магнолиевые
4, 5 - *Phyllites sp.* 1, 2 - Տերև անորոշ 1, 2 - Лист неопред. 1, 2

Տավուշի մարզ: Գյուղ Թեղուտ: Թեղուտ-1 բրածո բույսերի և կենդանիների տեղավայր

ԱՂՅՈՒՍԱԿ 6



Regnum - ANIMALIA -
ԿԵՆԴԱՆԻՆԵՐ - ЖИВОТНЫЕ
Phylum - MOLLUSCA - ՓԱՓԿԱՄԱՐՄԻՆՆԵՐ - МОЛЛЮСКИ
Class - GASTROPODA - ՓՈՐՈՏԱՆԻՆԵՐ - БРЮХОНОГИЕ
Gastropoda sp.
1-7 - Gastropoda sp. 1-7 - Փորոտանի անորոշ 1-7 - Брюхоногое неопред. 1-7

Տավուշի մարզ: Գյուղ Թեղուտ: Թեղուտ-2 բրածո կենդանիների տեղավայր



HIGHER PLANTS - ԲԱՐՁՐԱԿԱՐԳ ԲՈՒՅՍԵՐ - ВЫСШИЕ РАСТЕНИЯ

1-6 - Fossil wood - Բրածո փայտ - Ископаемая древесина

Տավուշի մարզ: Հովքի բրածո փայտի տեղավայր: 2-րդ տեղամաս



1-5.Վերգետնյա գտածոներ Հովքի քարիդարյան բացօթյա հնավայրերից:
1.Վանակատե սրածայր (Հովք-1); 2.Կվարցացված կրաքարե սրածայր (Հովք-3);
3.Կրաքարե փոսիկավոր գործիք (Հովք-3); 4.Կրաքարե քերթիչ (Հովք-2);
5.Կայծքարե քերթիչ (Հովք-3)



1-6.Վերգետնյա գտածոներ Հովքի քարիդարյան բացօթյա հնավայրերից:
1.Կվարցացված կրաքարե սրածայր (Հովք-3); 2.Կվարցացված կրաքարե սրածայր (Հովք-2);
3.Կայծքարե սրածայր (Հովք-2); 4-5.Կվարցացված կրաքարե սրածայրեր (Հովք-3);
6.Կվարցացված կրաքարե ծակիչ (Հովք-2)

ԱՂՅՈՒՍԱԿ 10

1-12.Վերգետնյա գտածոներ Հովքի քարիդարյան բացօթյա հնավայրերից:
1.Կվարցացված կրաքարե միջուկ (Հովք-3); 2.Կայծքարե շփածմամբ հարդարված շեղբ (Հովք-2);
3.Վանակատե շփածմամբ հարդարված շեղբ (Հովք-3); 4.Քաղկեդոնաքարե քերիչ (Հովք-3);
5.Կվարցացված կրաքարե քերիչ (Հովք-3); 6.Կվարցացված կրաքարե քերիչ (Հովք-2);
7-8, 10-12.Կվարցացված կրաքարե փոսիկավոր գործիքներ (Հովք-3);
9.Վանակատե փոսիկավոր գործիք (Հովք-2)

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԻ - Արևելագիտության ինստիտուտ
ԱՀ - Ազգագրական հանդես
ԲԻ - Բուսաբանության ինստիտուտ
ԴԱՆ - Դաշտային ազգագրական նյութեր
ԵԻ - Երկրաբանության ինստիտուտ
ԵՊՀ - Երևանի պետական համալսարան
ԵՔՊԹ - Երևան քաղաքի պատմության թանգարան
ԼԻ - Լեզվի ինստիտուտ
ՀԱԲ - Հայ ազգագրություն և բանահյուսություն
ՀԱԻ - Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀԱՊԹ - Հայաստանի ազգագրության պետական թանգարան
ՀԽՍՀ - Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն
ՀՀՀ - Հայաստանի հնագիտական հուշարձաններ
ՀՊԹ - Հայաստանի պատմության թանգարան
ՀՊՊԹ - Հայաստանի պատմության պետական թանգարան
ՄԺՈՒԿ - Մշակութային ժառանգության ուսումնասիրության կենտրոն
ՊԻ - Պատմության ինստիտուտ
ՇՀՀԿ - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
ՔԿԱԳ - Քաղաքացիական կացության ակտերի գրանցում
ВДИ - Вестник древней истории
ВОНАН - Вестник общественных наук АН

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նազիկ Ավագյան
ԻՋԵՎԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԸ XIXդ. - XXդ. ՍԿԶԲՆԵՐԻՆ 5

Լիլյա Ավանեսյան
ԻՋԵՎԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ 7

Նանա Ավետիսյան
ԷԹՆԻԿ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ 13

Կարինե Բազեյան
ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԺԱՆԵԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՎՈՒՇՑԻՆԵՐԻ ԿԵՆՑԱՂՈՒՄ 1940-1960թթ. 18

Լիանա Բեգինյան
ՏՈՒՐ-ԱԼ-ԼԻԼԻԹ ՈԳԻՆԵՐԸ 24

Մխիթար Գաբրիելյան
ՏԱՎՈՒՇԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 33

Բորիս Գասպարյան, Արթուր Պետրոսյան, Ռոն Փինհասի, Դմիտրի Առաքելյան, Իվան Գաբրիելյան, Սամվել Նահապետյան
ՔԱՐԵԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՂՍՏԵՎԻ ՀՈՎՏՈՒՄ 2005-2008թթ. 41

Բորիս Գասպարյան, Ռոն Փինհասի, Սամվել Նահապետյան, Ռոբերտ Ղուկասյան
ՄԻՋԻՆ ՊԱԼԵՈԼԻԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆ ԱՂՍՏԵՎԻ ՀՈՎՏՈՒՄ 57

Արտակ Դաբաղյան
«ՍԱՀՄԱՆԸ» ԵՎ «ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁԸ» ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ 67

Սեյրան Դովլաթբեկյան, Սիմոն Հմայակյան, Հակոբ Սիմոնյան
ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԻՆՉՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ 74

Հայկ Եսայան
ԿԱՅԱՆ ԱՄՐՈՑԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ 78

Ստեփան Եսայան
ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ..... 80

Ստեփան Եսայան
ԱՍՏՂԻ ԲԼՈՒՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ 82

Диана Зардарян, Фирдус Мурадян
РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК МОГИЛЬНИКА ОВК-1 84

Թամար Զաքարյան
ՊԱՐԶ ԵՎ ԲԱՐԴ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ 1980 ԵՎ 2008թթ..... 102

Աղասի Թադևոսյան
ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՁՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ 110

Վալերի Խաչատրյան
ՄԵԾ ԿՈՒԵՆՔ ԳԱՎԱՌԸ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ Ի ՎԵՐ 115

Էսթեր Խեմչյան
ԻՋԵՎԱՆԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ 117

Ռուզաննա Ծատուրյան
ԽՈՋԻ ՄԻՍԸ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԵՐԻ ՈՒՏԵՍՏԻ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 122

Հովհաննես Կարագյոզյան
ԱՂՍՏԵՎԻ ՀՈՎԻՏԸ ՍԵՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ 128

Մարիետա Կիրակոսյան
ԻՋԵՎԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ 131

Սիմոն Հմայակյան, Մարինե Մելքոնյան
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆԱՎՈՒՐ ԳՅՈՒՂԻ ՄԵՆԱՔԱՐԵՐԸ 133

Սուրեն Հոբոսյան
ՁԻԹՀԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՏԱՎՈՒՇՈՒՄ 137

Ալվարդ Ղազիյան
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂԻ (ՍՈՒԻԳԵՂ)
ՂԱՁԱՐՅԱՆ ՏՈՀՄԻ 200-ԱՄՅԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ..... 140

Վարդիթեր Մադաթյան
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԻՋԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ 142

Ռաֆայել Մաթևոսյան
ԱՂՍՏԵՎԻ ԼԵՌՆԱՀՈՎՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻՑ 149

Նիկոլ Մարգարյան
ԻՋԵՎԱՆՑԻՆԵՐԻ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԸ ԱՆՑՄԱՆ
ՇՐՋԱՆՈՒՄ 151

Հայկանուշ Մեսրոպյան
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ..... 156

Սամվել Մկրտչյան
ՏԱՎՈՒՇՑԻՆԵՐԻ ՏՈՆԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՔԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 166

Գայանե Շագոյան
ԳՈՇ ԳՅՈՒՂԻ ՏԵՂԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՐՈՇ
ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐ ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ..... 176

Ալինա Պողոսյան
ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՁՈՒՅԳԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՋԵՎԱՆ
ՔԱՂԱՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 182

Սվետլանա Պողոսյան
ՏԱՎՈՒՇԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒՏԵՍՏԻ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ
ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ..... 187

Անդրանիկ Սարատիկյան
ԿՈԹԻԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՄԱՏՈՒՌԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 193

Արմինե Սարգսյան
ԿԱՆԱՆՑ ՀԱՑԿԵՐՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼԱՆՔՆԵՐԸ ԸՍՏ
XIXդ. ՎԵՐՋԵՐԻ – XXդ. ՍԿԶԲՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ 200

Համլետ Սարգսյան
ՔԱՐՎԱՆՍԱՐԱ-ԻՋԵՎԱՆԻ ԱՐԴԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ..... 205

Հակոբ Սիմոնյան
ՁՈՂԱՁ-ԲԵՐՔԱԲԵՐ 215

Ռուբեն Սիմոնյան
ՁԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ
ՏԱՎՈՒՇՈՒՄ..... 233

Արմենուհի Ստեփանյան
ՍԵՐԻԿ ԴԱՎԹՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԴԻԼԻՋԱՆՈՒՄ 236

Լիլյա Վարդանյան, Միհրան Գալստյան
ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 239

Դերենիկ Վարդումյան
ԻՋԵՎԱՆՑԻ ՄԱԹՈՍԱՆՑ ՏԱՆ (ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ)
ՏՈՀՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 245

Արամ Քալանթարյան, Սուրեն Հոբոսյան
ԿՈԹԻ 247

Արամ Քալանթարյան, Հուսիկ Մելքոնյան,
Գագիկ Սարգսյան
ՆՈՐԱՀԱՅՏ ԹԵՎԱՎՈՐ ԽԱՉԵՐ ԻՋԵՎԱՆԻՑ 270

Ռուբեն Օհանջանյան
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍՊԱՌՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ 277

ՏԱՎՈՒՇ.
ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ
ԻՋԵՎԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ *Ս. Հակոբյանի*

Հրատակչության խմբագիրներ՝ *Ա. Հովակիմյան*

Ա. Սահակյան

Սրբագրիչ՝ *Ա. Ամիրխանյան*

Տպաքանակը՝ 300

Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչության տպարանում